

խուսք տէնիս. էն ինչ տղէն որ խօր մօր չը լըսը, կասըն թէ «ծուռի» էլ էն տղըն սիյանաթ¹ չըլնը:

Մէլըք էն տե մտածեց, էսաց.—Ձի խուսք տէնիս:

32. Ըլաւ էկաւ առն, էսաց.—Մէրս, էս առըմ քի խաթը: Մէրն էլ շատ ուրախցաւ, էսաց.—Մէլըք, որ գիւ իմ խուսք կէնիս, իս շատ կուրախանամ, ապա սը չանիս, զքեզի տղայ չըմ ճանչնայ:

33. Մէրը Դաւիթն քեան Մէլըք շատ կուզի, համա լաճուն պաւարաթ չէնը. կըսի.—Իմ լաճ սարթի². իս վախե՛նամ Դաւիթն սպանի: Կըլնը կերթայ խօր տուն, կըսը.—Սխալէրնիս. գիւ գիտէք ընչի խամար իմ եկիր (Մէլըքի մօր եօթ ախպէր ունէր): Մէլըք Դաւիթը մօտէն ընքիկը ի. իս կուզիմ գիւ ամեն օր Դաւիթ տանիք սար. ձի խիտ ալ էնը:

34. Մէկէլ օր քեռիքն կգեան, գԴաւիթ կը վերցըն կը տանըն սար:

Երկու շաբաթ կերթան նէջիկը կէնին, յեվարին կգեան տուն:

Մէկ օր մէրն կասը Դաւիթն.—Դաւիթ, գիւ էլ նէջիկ կէնըն:

Էսաց.—Ոս, մարէ, վերու օխչարքիկը իս կսպանիմ. իս կասընըմ բիրիմ չիւր³ քաղքը կուշա. կտամ, քեռիքն կը տանըն:

Կըսը.—Դաւիթ, գիւ վաղ մի տայ, բի մի խամար:

Դաւիթ կըսի.—Սղէկ, վաղը իս կը բիրիմ:

35. Խըլուտուն քեռիքն էկան, առն.—Դաւիթ, կայնը, էթթանը:

Գնացըն սար. Դաւիթն էր, կան էկաւ, մէկ ջուջ, ահագին վէրու օխչար սպանից: Քեռիք տեսան, շա՛՛ մնացըն. տունըն Դաւիթն քեամակ, շիկեց էկաւ. սըրինքն էլ կընցնին յառէջ, հա կգեան, էկան չիւր քաղքը քեամակ:

36. Քեռիք ըսին.—Դաւիթ, գիւ գետըն, գիւ գնա՛, մինք կասընընք կերթանը:

Դաւիթ կըսի.—Պարիկը ձի պէս բլնը, չըմ իտամ էգա վէրու օխչար:

Քեռին էսաց.—Դաւիթ, վրէ՛ չըս իտայ:

Էսաց.—Սկնէմ⁵ օր իս կը բերէր, իս կաէր, գիւ կը տանէք, էգա մէկն չըմ իտայ, բժի խամար կը տանիմ:

1 Թուրք.—խտանութիւն. հատա: 2 Թուրք.—չոր, գիւրպարգիւ. բարկացող: 3 Մինչեւ: 4 Նաչ մնալ (Թուրք.)—ապշիւր. ապուշ կտրել: 5 Այսրան: